

կաթնարանին զուգախառնութեան աստիճանը քիչ մը փոփոխել, այս դռնակները բանալով՝ կարենաս կաթնարանին ու շրջապատին մէջտեղի եղած միջոցին մէջ բանուկ քամի մտցնել, որովարտաքին ազդեցութեամբ մը միայն՝ կաթնարանիդ զուգախառնութեան աստիճանին վրայ ուղած թեթեւ փոփոխութիւնդ կարենաս տալ :


Իսկ բուն կաթնարանին բոլորտիքն ալ հարկաւոր է քարէ լայն ջրանցք մը շինել՝ մէջը պաղ ջրով, որպէս զի ըստ պիտոյից կաթդ կարենաս պաղեցնել՝ կաթին ամանները մէջը դնելով . և թէ կաթնարանիդ ու թէ կաթնարանէն դուրս՝ այն պարապ միջոցին մէջ, որ կաթնարանէն ու շրջապատէն կը մնայ, խել մը երկայն փայտէ յենարաններ շարէ՝ կաթին ամանները վրան դնելու համար : Իսկ լաւաշարան ըստածը, ինչպէս որ վերն ալ ըսինք, այդ շինութեան կերպիդ մէջ նոյնպէս կաթնարանին քով շինէ, բայց այն կերպով՝ որ դրսէն լուացարանը մտնելու համար հարկ չըլլայ կաթնարանին դռնէն ներս մտնել, հապա ընդհակառակն դրսէն առանձին դուռ մը ունենայ, և ներսէն ալ կաթնարանին հետ հաղորդուած դուռ մը : Եւս ներքին դուռը ձմեռ ու ամառ ատեն շատ հարկաւոր կ'ըլլայ . որովհետեւ սաստիկ ցրտին ու սաստիկ տաքին պէտք չէ կաթնարանին արտաքին դուռը գործածել, հապա լուացարանին դրսի դուռնէն ներս մտնելու և վերջը անիկայ լաւ մը գոցելու է, ու ետքը մէջտեղի ներքին հաղորդակցութեան դռնէն ներս կաթնարանը մտնելու է . իսկ ուրիշ ատեն՝ երբ կաթնարան մտնել ելլել հարկ չկայ, աղէկ մտադրութիւն դնելու է որ այս հաղորդակցութեան դուռը լաւ գոց մնայ : Եւս կաթնարանին մէկ անկիւնը վառարան մը պէտք է շինես՝ վարան թափծու կաթսայով մը, կաթին ալ մանները լուալու համար, և ուրիշ մէկ անկիւն մըն ալ աղտոտ ջրերը թափելու համար պզտիկ ջրանցիկ աւազան մը :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Փիղ :

Փիղը չորքոտանեաց մէջ քան զամենը հսկայագոյնն է, և իր ամբողջութեան տեսքով՝ մասնաւոր դաս մը կը կայացնէ, որով նաև բարուց կողմանէ ալ ուրիշ կենդանեաց հետ ամենևին նմանութիւն չունի : Իր արտաքին երևոյթը շատ մեծղի է . մերթը թխագոյն ու գրեթէ առանց մազի, պոչը մազի փունջով մը կը վերջանայ . պզտիկ աչուրներ ունի, բայց վառվռուն ու շատ զգայուն, թէպէտ շատ սրատես չեն . պատճին երկու կողմէն երկու ժանիք դուրս ցրցուած են և շատ մեծ յարգ ունին իրենց մաքուր սպիտակութեամբ . ականջներն ու ռնգուկներ խիստ զգայուն են, և նուազարանաց ներդաշնակութեան շատ ախորժ կ'առնէ . սրունքները կլոր ու հաստկեկ և ոտուրները հինգ հինգ մատ բաժնուած են . և որչափ որ ալ մեծամարմին և ծանր է, այնչափ ալ արագ է իր ընթացքը, մանաւանդ հարթ տեղուանք . սովորական քալուածքը՝ ձիու քալուածք է, իսկ բարկութեան ժամանակը չափէ դուրս արագ կ'ընթանայ : Եւս ծիծերը կուրծքին վրայ առջևի ոտուրներուն մէջտեղն է : Փղին նոր ձագը 35 բթաչափ բարձրութիւն ունի, և մինչև տասներինը ու քսանըջորս տարի կը մեծնայ : Բայց իր վրայ երևցող զարմանալի գործարանը, որ զինքը աւելի կը զատէ ուրիշ կենդանիներէն, իր պատիճն է, որ իրեն թէ հոտոտելեաց, թէ լսելեաց և թէ շօշափելեաց տեղ կը ծառայեցնէ : Եւս պատիճը մկանունքներէ, ջղերէ և մաշկէ կը բաղկանայ ու ծայրը շրթանց կը նմանի . և ինքը ուղածին պէս կրնայ զասիկայ երկնցնել, կարճեցնել, կլորել : Պատիճը փղին վրայ նոր անդամ մը չէ, այլ վերին շրթանց և



Փիղ :

Քթին մէկտեղ միաւորութիւնը երկըն-
ցուցած , ինչպէս որ ասոր պզտիկը կը
տեսնենք դաբրիի և ուրիշ կենդա-
նեաց վրայ : Խիստ ուժով է ասիկայ
և միանգամայն փափուկ զգացմունք ու-
նի . որովհետեւ ասով ոչինչ մեծութեամբ
բան մը գետնէն կը վերցընէ , ծաղիկ կը
թողվէ , ճիւղեր կը կոտորտէ , մատաղ
ծառեր արմատէն կը հանէ , ուզածը կը
վերցընէ բերանը կը խոթէ , կռնակը
կը դնէ կամ հեռունները կը նետէ . ա-
սով կը շոյէ ու կը զարնէ , ասով կը պա-
տերազմի , կամ ինքըզինքը կը պաշտպա-
նէ . ասով իր ջուրը կը խմէ . ու այս մէկ
անդամը շատ անդամներու տեղ լաւ
կերպով կը գործածէ :

Ինութեամբ ընկերական է . կերա-
կուրը կանաչեղէն , և ամենեւին միս
չուտեր , իսկ ընտանեցուցածները ոգե-

ղէն ըմպելիքներ կը խմեն : Բարուցը
գալով՝ թէ որ կըթելու ըլլաս , խիստ
ընտանի , հնազանդ և համբերող է , և
ամէն չորքոտանիներէն աւելի քաղցր ու
բանիբուն է : Օարմանալի է իրեն
տիրոջը հետ ունեցած ընտանութիւնը .
անոր ձայնը կը ճանչնայ մէկէն , և այս
ճանաչողութիւնը անանկ սուր է , որ
ձայնին կերպէն կ'իմանայ անոր բար-
կութիւնը կամ հաճութիւնը , և ըստ
այնմ ինքն ալ կը վարուի . նոյն ընտա-
նութիւնը կը ցուցընէ նաև անոր ծա-
նօթներուն , և յօժարութեամբ անոնց
բեռները առնելով տեղէ տեղ կը տանի :

Բնակութիւնը բնիկ գաւառներուն
մէջ՝ գետափանց քովի անտառներն են ,
լաւ ոռոգեալ ու պտղաւէտ մարգագե-
տիներ , ուր արագ կ'աճին բոյսերը .
շուքի տակ իր հանգիստը կ'առնէ . լուա-

ցուիլը իր մեծ զուարճութիւնն է , և զովանալու համար գետ կը մտնէ , ինչ պէս նաև այս կլիմաներուս մէջ ամառը շատ կը սիրէ ջրով խաղալ , զոր իր պատճովը ժողվելով՝ անձրևի պէս կը սրսկէ : Իրեն գաւառներուն մէջ՝ լայն գետեր կը կտրէ դիմացէ դիմաց . հանդարտ ջրին երեսը կը կենայ և միայն պատճով ջուրը մղելով՝ ուզած տեղը կ'երթայ :

Եւս կենդանիս հին ատենէ 'ի վեր կը գործածէին մարդիկ իրենց պիտոյիցը . մանաւանդ պատերազմի համար , ուր իր ներկայութեամբը տեսարանին ահաւորութիւնը կ'աւելցնէր : Պարսից գրեթէ ամէն պատերազմներուն մէջ կը յիշուին փիղերը , երբեմն Յունաց ալ : Հիմակուան ատենս ալ Հընդկաստանցիք իբրև ընտանի կենդանի կը գործածէն . և մանաւանդ պատերազմի գացող զինուորաց զնդին ճամբայ բանալու , և հրանօթները դժուարին ճամբաներէ անցընելու համար շատ լաւ կը ծառայէ : Հիները հարուստ զարդերով կը գեղեցկացնէին զփիղը , որով իշխանազանց և ականաւոր անձանց շքեղութիւնը ևս առաւել դուրս կը ցատէր . հիմա ալ հանդիսից ժամանակը Եւրեւթեան Հնդկաստան կը պահեն այս սովորութիւնը :

Փիղն որսալու համար մարդիկ ընտանիները կը գործածեն : Երբեմն արուներուն մէջէն մեծերը թափառական դը պտըտին . և այս տեսակները շատ հաստ և ուժով կ'ըլլան , անանկ որ անցած տեղերնին կ'աւրեն կ'աւրըչտըկեն : Որսորդները իրեք չորս ընտանեցուցած էգ փիղեր առնելով՝ գիշեր ցորեկ ասոնց ետեէն կ'ըլլան . գիշեր ատեն կրնան ապահովապէս շատ մօտենալ , իսկ եթէ ցորեկ ըլլայ՝ զգուշութեամբ : Եգերը կամաց կամաց աւրուին դիմացը կ'երթան , խոտ ուտելով ու այնպէս մը ձևացընելով՝ իբրև թէ անտառային ըլլային : Եսանկով մէկէն կ'իմացուի թէ արդեօք կրնան որսերնին ընել : Երբոր էգերը կը մօտենան , որսորդները քիչ մը հեռաւորութեամբ կը պահուրան . թէ որ փիղը

նորեկներուն շոյելուն խելքը տայ , ալ ապահով է որսը . վասն զի այն ատենը որսորդները հանդարտութեամբ փորուն տակը մտնալով՝ առջևի ոտուրները հաստ չուանով մը կը կապեն ու ետքը ետեխները , և թէ որ տեղը յարմար ըլլայ՝ ամուր ծառի մը կապելով կ'ապահովցնեն : Եսպէս կը թողուն զինքը որսորդները . նմանապէս էգերն ալ կամաց կամաց ետ քաշուելով՝ ինքը մինակ կը մնայ , և ուզելով անոնց հետեիլ՝ կապկըպած կը գըլորտըկի . այն ատեն ամէն կատաղութիւն կը բանեցընէ ազատելու համար , բայց 'ի զուր . և տկարացած՝ գետինը կ'իյնայ : — Իսկ Հնդկաստան ուրիշ զարմանալի կերպ մ'ալ կը գործածեն բազմութեամբ մէկտեղ բռնելու համար : Ետ մը մարդիկ ասոնց մէկ խումբը պաշարելով՝ այլ և այլ նուագարաններու , հրացաններու և ուրիշ կերպ կերպ հրազէն անօթներու խառնաշփոթ ուրոտմունքներով կը սարսափեցընեն զանոնք և կը ստիպեն իրենց համար լարած թակարդին մէջ մտնել , ուսկից անկարելի է ելլել . և այսպէս դարձեալ զարհուրեցընելով զանոնք՝ մէկիկ մէկիկ դուրս կը հանեն անկէց հեզ կերպարանք մը առած :

Հնդկաստանի գաղթական Եւրոպացիքը փղի վրայ հեծնելով՝ վագրերու որսորդութեան կ'ենլեն . վասն զի ձին այն ամէհի գազանին միայն տեսութենէն կը վախէ . իսկ փիղը իր սուր հոտառութեամբն ու կարգէ դուրս ուժովը՝ թանձրախիտ մացառներն ալ կը ճղքէ կ'անցնի : Եայց փղով ալ դարձեալ վտանգաւոր է որսորդութիւնը . վասն զի ինքն ալ քիչ մը կը վախէ վագրէն . վագրն որ վիրաւորի , կը յարձակի կատաղաբար փղին պատճէն բռնելու , զորն որ փիղը կրցածին չափ վեր կը բռնէ . և թէ որ լաւ կը թեալ ըլլայ , նոյն միջոցին ժանիքներովը բռնելով զվագրը՝ բանը կը լմնցընէ . այսպէս լաւ կը թուած փիղը՝ վագրերը սպաննելով կ'որսայ . բայց երբեմն կը հանդիպի ալ՝ որ վագրը կը բռնէ անոր

դատաճէն , և փիղը ինքիրմէ դուրս ելած ոռնալով կը ցածին չափ փախչիլ կը սկըսի՝ ամէն բան տակնուվրայ ընելով : Երբեմն ալ դեռ կռուի չելած՝ փիղը կ'առնէ կը փախչի , և թէ որ վագրը կռնակէն վեր ցատքելու ըլլայ , մեծ վտանգի մէջ են որսորդները :

Թխագոյն տեսակէն զատ սպիտակ փիղեր ալ կը գտուին , մանաւանդ Մալայի , Սիամի , Պիրմանի տերութեանց մէջ , որոնք խիստ յարգի են : Հին Հռոմայեցւոց ալ ծանօթ էր այս տեսակ փիղը , որ երբեմն ժողովրդեան տեսութեանը կը հանէին : Կայ ուրիշ տեսակ մ'ալ՝ Լիթիկեցի ըստած , որ Սենեկայի առ լիսինիա կը գտուի , նոյնպէս Վոնկոյի թագաւորութեան մէջ . և այս տեսակը իր գանկին կըրուութեամբ , ականջին մեծութեամբն ու լայնութեամբը և ժանիքներուն չափա-

զանց մեծութեամբը կը տարբերի սովորական փղէն : Եւս երկու տեսակէն զատ երեւցեր է ատենօք ուրիշ տեսակ մ'ալ , որուն ակռաներն ու ժանիքները հողուն տակէն կը գտնեն կը հանեն հիմա և շատ ալ յարգի են : Վիւվիէ երեւելի բնապատումը ասոր նկարագիրն ալ կ'ընէ . ասոնք առաւելապէս Սիական Սուսաստան կը գտուին . թէպէտ ուրիշ ամէն տերութեանց մէջէն ալ կ'եղէ , ինչպէս Հուսուրդ Ճանապարհորդը ինչուան Ռերուէն , Սեխիգոյէն ալ բերաւ :

Սերջապէս այս կենդանիս թէպէտ և մեր սովորական կենաց շատ օգտակարութիւն մը չունի , բայց չորքոտանեաց հրաշալին է . անոր համար իրաւամբք երեւելի մատենագրին մէկը՝ « Հրէշ նիւթոյն և զարմանալիք մը տաց » կը կոչէ :

Մ Ա Ն Ր Գ Ի Տ Ե Լ Ի Ք

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Որոնք են առաջին կարգի դիւցազներգակ բանաստեղծները :

— Հոմերոս , Վիրգիլիոս , Դասոյ : — Հոմերոս երգեց Իլիական ու Ոդիսական դիւցազներգութիւնները . առաջնոյն նիւթը Աքիլլէսի բարկութիւնն է . երկրորդին՝ Ոդիսեոսի Իգակայ Թագաւորին ճանապարհորդութիւնը Տրոյիոյ առաջին ետքը : Ըստ հանճարաւոր է Հոմերոս իր քերթուածներուն մէջ , վեմ , վաւառուն , բնական , քաջ նկարիչ ընտրութեանց , և հին աստիկ կրօնից , օրինաց , աշխարհագրութեան , աստղաբաշխութեան , զինուորութեան , արուեստից , կարճ խօսքով նոյն ատենուան աշխարհքին վիճակին վրայ լիովին տեղեկութիւն կու տայ : Բայց այս դիւցազներգութեանց մէջ կան քննադատք՝ որ կը գտնեն չափազանց իմաստներ ու բնաւորութիւններ , ռամկական նմանութիւններ , և զարմանալի նկարագրութեանց հետ երկայն ու ձանձրալիներ ալ . ինչպէս նաև գրողագիտութեան յաճախութիւն մ'ալ կը տեսնեն , որ գուցէ երբեմն տւելորդ ալ կ'երևնայ :

Վիրգիլիոսի տասնըմէկ տարուան աշխատութեան ծնունդը Ենէական դիւցազներգութիւնն է , որ Ենէասայ Հուլմայեցւոց տերութիւնը կանգնելը կը պատմէ . գերազանց է իրեն արուեստը , տաղաչափութիւնն ու ներդաշնակութիւնը անմահ , ամէն տեսակ իմաստները շաղ լաւ բացատրուած ու անանկ աղուոր գոյն տրուած , որ կը մոգէ ընթերցողը : Վիրգիլիոս օրինակ ունեցաւ իրեն զՀոմերոս , և անոր հետեւելով շատ բան առաւ անկից . և թէպէտ արուեստով կ'անցնի , բայց հանճարոյն կողմանէ Հոմերոսի չհասնի : Իր դիւցազներգութեան գեղեցիկ զարդարանքները սքանչելի գրողագիտին են՝ քան թէ ընդհանուր գիւտը , և Հոմերոսի վաւառունութիւնն ու կրակը չունի . բայց քերթողական արուեստը կատարելապէս ճանչնալը ու ի գործ դնելն ալ գեղեցիկ ու յարգի հանճար մըն է :

Դասոյ երիտասարդական հասակին մէջ շինեց Երուսաղէմ Ազատեալ դիւցազներգութիւնը , որուն մէջ կ'երգէ կրօնից յաղթանակը թէ ինչպէս խաչակիրք սուրբ երկիրը Սարակինոսաց ձեռքէն առին : Որչափ հռչակաւոր է այս քերթուածը , այնչափ ալ ի սկզբան անգ վար զարնուեցաւ : Դասոյի դիւցազներգութեան բոլոր գեղեցիկու-